

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

30.03.2020թ.
No 8-6/14812-2020

ՔԱՂԱՔԱՑԻ ՌՈՐԵՐՏ ԿԱՌԼԵՆԻ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ
պատճենը՝ ՀՀ ՊԵԿ ՀԱՐԱՎԱՅԻՆ ՄԱՔՍԱՏՈՒՆ-ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ ՊԱՐՈՆ Հ. ՄԻՐԶՈՅԱՆԻՆ
ՀՀ ՊԵԿ ԱՐԱՐԱՏՅԱՆ ՄԱՔՍԱՏՈՒՆ-ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ ՊԱՐՈՆ Կ՝ ԲԱԲԱՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր ՀՀ ՊԵԿ մուտք Մ-1479-2020
Առ 24.03.2020թ.-ի գրության

Հիմք ընդունելով ՀՀ ՊԵԿ նախագահի տեղակալ պարոն Ա. Մանուկյանի 27.03.2020թ.-ի թիվ Ն/3-2/47247-2020 և ՀՀ ՊԵԿ նախագահի տեղակալ պարոն Է. Հովհաննիսյանի 26.03.2020թ.-ի թիվ Ն/11-7/46457-2020 գրությունները՝ տեղեկացվում է, որ ԵՏՄ Մաքսային Օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ ուղևորային մաքսային հայտարարագրի կիրառմամբ մաքսային հայտարարագրման ենթակա՝ Միության մաքսային տարածք ներմուծվող (ներմուծված) անձնական օգտագործման ապրանքների հետ կապված մաքսատուրքերը, հարկերը վճարելու պարտավորությունը, բացառությամբ միջազգային փոստային առաքանիներով ուղարկվող անձնական օգտագործման ապրանքների, հայտարարատուի համար դադարում է մասնավորապես հետևյալ հանգամանքի առաջացման դեպքում՝

Ժամանակավոր ներմուծված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցները Միության մաքսային տարածքից արտահանելը՝ այն ժամկետից հետո, որի ընթացքում այդպիսի տրանսպորտային միջոցները կարող են ժամանակավոր գտնվել Միության մաքսային տարածքում՝ հետևյալ պայմանների միաժամանակյա պահպանման դեպքում՝

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ԶԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ



ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ

0015, Երևան, Մ. Խորենացու 3.7 Հեռ. +374 60.54 46 57
Կայք՝ www.petekamutner.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

այդպիսի տրանսպորտային միջոցների հայտարարագրումը՝ Միության մաքսային տարածքից արտահանելու նպատակով, իրականացվել է Միության մաքսային տարածքում ժամանակավոր ներմուծված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցների ժամանակավոր գտնվելու ժամկետը լրանալուց **6 ամսից ոչ ուշ** կամ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից սահմանված ավելի երկար ժամկետից ոչ ուշ,

այդ տրանսպորտային միջոցների հետ կապված՝ չի առաջացել մաքսատուրքերը, հարկերը վճարելու ժամկետը՝ Օրենսգրքի 268-րդ հոդվածի 6-րդ կետի 1-ին ենթակետին համապատասխան:

Միաժամանակ տեղեկացվում է, որ ժամանակավոր ներմուծման սկզբնական ժամկետները քաղաքացիների կողմից, Հայաստանի Հանրապետությունում և աշխարհում ստեղծված իրավիճակով պայմանավորված, խախտելու պարագայում, հիմք ընդունելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ Օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասը, վարչական պատասխանատվություն չի կիրառվի:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ տեղեկացվում է, որ խնդրո առարկա ժամանակավոր ներմուծված անձնական օգտագործման տրանսպորտային միջոցի արտահանման նպատակով մաքսային գործառնությունները **ժամանակավոր ներմուծման ժամկետի ավարտից ոչ ուշ, քան 6 ամսվա ընթացքում** կատարելու պարագայում մաքսատուրքի և հարկերի վճարման գծով պարտավորությունները կդադարեն և վարչական պատասխանատվություն չի կիրառվի:

Հարգանքով՝

Մ/Ծ ԳԵՂԱՊԵՏ

3/30/2020


X

ՇՈՒՇԱՆԻԿ ՆԵՐՍԻՍՅԱՆ

Signed by: NERSISYAN SHUSHANIK 5308860769

Շ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

ՀՀ ՊԵԿ ՈՍԿ և ՄԸՀ բաժին
Մարիամ Մարգարյան
Հեռ. 011 801170 /1190/



ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵ

0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57
Կայք՝ www.petekamutner.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am